

Օրհուսի կոնվենցիայի և ՀՀ օրենսդրության խախտումները

1. Ազդակիր համայնքները ընտրվում են կամայական:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդ. համաձայն. «20) ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

- **Օրենքի սահմանումը սխալ է. Ազդակիր համայնքը սահմանվում է, որպես բնակչություն, որն իր հերթին սահմանվում է որպես ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք:**
- «Հանրային ծանուցումների և քննարկումների իրականացման» Կարգի, /հաստատված ՀՀ Կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն որաշմամբ/ 32-րդ. կետի համաձայն. «32. Նախնական գնահատման հանրային քննարկումներն իրականացվում են այն ազդակիր համայնքում, որի վարչական տարածքում իրականացվելու է հիմնադրությամբ փաստաթղթի դրույթները կամ նախատեսվող գործունեությունը»:
Օրենքը չի պարտադրում, որ փաստաթղթերում հստակ նշվեն որ համայնքներն են համարվում ազդակիր:
- **Չեն ընտրվում բոլոր հնարավոր ազդեցության ենթակա համայնքները**
Օրինակ, Ամուլսարի հանքավայրի դեպքում Կեչուտը իսկզբանե ճանաչվել էր, որպես ազդակիր համայնք, սակայն Ջերմուկը չէր ճանաչվել՝ ազդակիր համայնք: Այնուհետ, ծրագիր իրականացնողը պարզում է, որ Կեչուտ գյուղը մտնում է Ջերմուկ քաղաքի վարչատարածքային կազմում, Կեչուտը դադարում է լինել ազդակիր: «Գեոթիմ» Ընկերությունը 3 փորձագիտական եզրակացություն ստացել է, առանց Ջերմուկ քաղաքում և Կեչուտ գյուղում հանրային քննարկումներ կազմակերպելու, գրկելով նշված համայնքների բնակչությանը որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքից: Այդ կապակցությամբ Ջերմուկի բնակիչները դիմել են ՀՀ Վարչապետին՝ Ջերմուկը ազդակիր համայնք ճանաչելու պահանջով, մերժում ստանալուց հետո դիմել են ՀՀ Վարչական դատարան՝ Ջերմուկ քաղաքի բնակչությանը և իրենց ազդակիր ճանաչելուն պարտավորեցնելու պահանջով, սակայն ՀՀ Վարչական դատարանը հայցը չի ընդունել վարույթ, պատճառաբանելով, ոչ պատշաճ հայցվորի ողմից է ներկայացված, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը ուժի մեջ է թողել ՀՀ Վարչական դատարանի որոշումը, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ վերադարձրել է բողոքը:
2016թ. փորձաքննության նպատակով ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացրած ծրագրի փոփոխության ՇՄԱԳ-ում Ջերմուկը նշվել է որպես ազդակիր համայնք, սակայն Ջերմուկ քաղաքում հանրային քննարկումներ չեն անցկացվել: Փորձաքննություն իրականացնող մարմինը

պնդում է, որ Ջերմուկի բնակիչների համար անց է կացվել հանրային քննարկում, քանի որ Ջերմուկի քաղաքապետը տեղեկացվել է, Սարավան գյուղում տեղի ունեցող քննարկումների մասին: Ինչպե՞ս էին պատկերացնում, որ 6000 բնակչություն ունեցող քաղաքի բնակիչները գնան 25կմ հեռավորության վրա գտնվող Սարավան գյուղ /որտեղ նույնիսկ այդ չափի դահլիճ չկա/ ու մասնակցեն քննարկումների: Որոշումների ընդունմանը քաղաքացիների մասնակցության իրավունքը ոչ թե պետք է իրականացվի ձևական, այլ այն պետք է լինի ռեալ, այսինքն, հանրային իշխանությունների կողմից պետք է ստեղծվեն բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի քաղաքացին կարողանա ռեալ իրականացնի իր իրավունքը:

Հաշվի առնելով, որ Արփա և Որոտան գետերը, ինչպես նաև Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները համաձայն «Սևանի մասին» ՀՀ օրենքի հանդիսանում են Սևանի ջրհավաք ավազանը, որտեղ արգելված է հանքարդյունահանում իրականացնել, հետևաբար, Գեղարքունիքի մարզի այն գյուղերը, որոնք օգտվում են Սևանա լճի ջրերից նույնպես ենթակա են հնարավոր ազդեցության և նույնպես պետք է ճանաչվեին ազդակիր համայնքներ:

Բացի այդ, Արփա և Որոտան գետերի ջրերից օգտվում են նաև Վայոց Ձորի և Արարատի մարզերի համայնքները, ինչպես նաև Սևանա լճի ջրերը օգտագործվում են Կոտայքի մարզի և Երևանի բնակիչները, հետևաբար իրենք նույնպես կարող են կրել հնարավոր ազդեցություն և պետք է ճանաչվեին ազդակիր:

Այսպիսով, խախտվել են ոչ միայն Ջերմուկի և Կեչուտի բնակչության, այնպես էլ Հայաստանի 6 մարզերի տարբեր համայնքների բնակիչների՝ Օրհուսի Կոնվենցիայով սահմանված տեղեկատվություն ստանալու, որոշումների ընդունմանը մասնակցելու և արդարադատության մատչելիության իրավունքները:

2. Իրականում, ձևականորեն է տրամադրվում որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքը: Մասնավորապես, հաճախ պատշաճ չեն հայտարարվում հանրային քննարկումների մասին, կամ հրավիրում են իրենց կողմնակից մարդկանց, կամ հայտարարվում են քննարկումներ, սակայն կողմնակի մարդկանց ներս չեն թողնում, ինչպես տեղի ունեցավ վերջերս Քաջարանում քննարկումների ժամանակ:

3. Օրհուսի Կոնվենցիայով սահմանված տեղեկատվություն ստանալու և որոշումների ընդունմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը խախտվում է նաև այն դեպքերում, երբ փորձաքննություն անցկացնելու համար ներկայացված ոչ բոլոր փաստաթղթերն ու փորձագիտական եզրակացություններն են հրապարակվում ՀՀ բնապահպանության նախարարության կայքում:

4. Օրենքով և Կարգով սահմանված ժամկետները բավարար չեն պատշաճ իրականացնելու՝ որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքը:
Հանրությունը՝ հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին ծանուցվում է լսումներից 7 աշխատանքային օր առաջ:

Իրականում, 7 օրվա ընթացքում, հնարավոր չէ ծանոթանալ մեծ ծավալ ունեցող /մինչև 1000-1500 էջ/ մասնագիտական նյութին և պատրաստ լինել մասնակցելու քննարկումներին:

Իսկ հանրությունը կարող է «գրավոր դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել՝

1) նախնական փորձաքննության փուլում՝ ծանուցումից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում.

2) նախնական գնահատման, հիմնական գնահատման և հիմնական փորձաքննության փուլերում՝

ա. հիմնադրության փաստաթղթի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների համար՝ ծանուցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում,

բ. Բ կատեգորիայի համար՝ ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

գ. Գ կատեգորիայի (նախնական գնահատման փուլ) համար՝ ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում» /Կարգի 15-րդ կետ/:

Փաստորեն, առաջարկ ներկայացնելու ժամկետը սահմանվել է ծանուցումից հետո, այլ ոչ թե քննարկումից հետո, երբ անձը լիարժեք տեղեկացվում է ծրագրի մասին և լսում այլ կարծիքներ: Իրականում, 1-ին կետի դեպքում լսումների օրը պետք է ներկայացնել կարծիք, իսկ 2-րդ կետի դեպքերում՝ 3-7 աշխատանքային օրվա ընթացքում, որը շատ կարճ ժամանակ է դիտողություն կամ առաջարկություն անելու համար:

Այս խնդրին բազմիցս անդրադարձել է նաև Օրհուսի Կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեն, դեռ նախկին Օրենքի գործողության ժամանակ, նշելով, որ ծանուցման և առաջարկությունների ներկայացման ժամկետները շատ կարճ են սահմանված և առաջարկություն է արել երկարացնել ժամկետները՝ իրավունքի իրականացման ռեալ հնարավորություն տալու նպատակով: Այն դեպքում, երբ նախկին Օրենքում /1995թ./ սահմանված էր ծանուցման համար 15, իսկ առաջարկություն ներկայացնելու համար՝ 30 աշխատանքային օր: Փաստորեն, փոխանակ ժամկետները երկարացվեն, հակառակը կրճատվել են:

5. Օրենքում և կարգում հստակ չի ձևակերպված հանրության առաջարկությունների և դիտողությունների հաշվի առնելու կարգը, հաշվի չառնելու դեպքում իրավական հետևանքները և բողոքարկման կարգը:

Օրենքի 26-րդ հոդ. 8-րդ մասի համաձայն. « 8. Հանրության հիմնավորված դիտողությունները և առաջարկությունները ձեռնարկողը և լիազորված մարմինը պետք է հաշվի առնեն: Հաշվի չառնելու դեպքում տրվում են հիմնավոր պատճառաբանումներ:» Նախ, պարզ չէ թե ո՞վ և ի՞նչ չափորոշիչների հիման վրա է որոշվում առաջարկի «հիմնավորված» լինելը: Երկրորդը, «հիմնավոր պատճառաբանումները», որը տրվում է հանրության առաջարկը հաշվի չառնելու դեպքում իրավական փաստաթուղթ չէ, հետևաբար, այն չի կարելի բողոքարկել:

Կարգի 29-րդ կետի համաձայն. «29. Հանրության կարծիքը համարվում է դրական, եթե քննարկումներին ոչ մեկը չի ներկայանում կամ դիտողություններ կամ առաջարկություններ չի ներկայացվում:» Այս դրույթը լիովին անընդունելի է, քանի որ չի կարելի գնահատել /դրական կամ բացասական/ մի բան, որը գոյություն չունի: Տվյալ դեպքում չկա կարծիք, ի՞նչն են գնահատում:

6. Կարգի 22-րդ կետում նշված է. « 22. Քննարկումների պատասխանատուն քննարկումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանրային քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը ներկայացնում է փորձաքննական կենտրոն:» Արձանագրությունը պետք է կազմվի հանրային քննարկման ընթացքում և բոլոր մասնակիցները ստորագրեն այն: Եթե որևէ մեկը համաձայն չի լինի Արձանագրության հետ պետք է գրի հատուկ կարծիք, որը պետք է կցվի Արձանագրությանը: Իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում, քննարկումների պատասխանատուի և 2 մասնակիցների ստորագրությամբ կազմվում է համապատասխան ակտ, որը նույնպես կցվում է Արձանագրությանը:

Առաջարկություններ.

- Օրենքում հստակ տալ ազդակիր համայնքի սահմանումը
- Հանրային ծանուցումների և քննարկումների իրականացման» Կարգում պետք է նշել, որ «քննարկումները կազմակերպվում են բոլոր ազդակիր համայնքներում»
- Սահմանել Օրենքում դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Ծանուցման և քննարկման կարգի, ժամկետների խախտման և հանրության առաջարկությունները ու դիտողությունները անհիմն հաշվի չառնելու դեպքում փորձաքննական եզրակացությունը համարվում է անվավեր:»
- Ծանուցման ժամկետը երկարացնել մինչև 20 աշխատանքային օր, իսկ առաջարկությունների ներկայացման համար սահմանել 40 աշխատանքային օր:
- Օրենքի 26-րդ հոդ. 8-րդ մասում «հիմնավորված դիտողությունները և առաջարկությունները» բառերը պետք է փոխարինել «բոլոր դիտողությունները և առաջարկությունները»:
- Նույն հոդվածի նույն մասում «Հաշվի չառնելու դեպքում տրվում են հիմնավոր պատճառաբանումներ» շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանրության առաջարկությունները մերժելու և դիտողությունները հաշվի չառնելու դեպքում լիազոր մարմինը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել դատական կարգով»:

- Համապատասխան փոփոխություններ կատարել Կարգում
- Նույն հոդվածի նույն մասում ավելացնել. «Հաշվի չեն առնվում գործող օրենսդրության պահանջներին հակասող և շրջակա միջավայրի վրա ազդեցությանը չվերաբերող, ինչպես նաև սխալ հաշվարկներ կամ տվյալներ պարունակող դիտողություններն ու առաջարկությունները»
- Կարգի 29-րդ կետը հանել:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության ընթացքում հաճախ թույլ տրվող սխալները և օրենսդրության բացերը

1. Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասում նշված է. «Գնահատման մեթոդիկան հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Մինչ օրս գնահատման մեթոդիկան ՀՀ Կառավարությունը չի ընդունել: Չկա մեթոդիկա, չկա գնահատում: Հետևաբար, 2014թ. հետո շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում չի իրականացվել: Եթե գնահատում չի արվել, հետևաբար, չի կատարվել նաև փորձաքննություն: Եթե, չի արվել գնահատում ու փորձաքննություն, հետևաբար, նոր Օրենքի ընդունումից հետո տրված փորձաքննական եզրակացությունները կարելի անվավեր ճանաչել:
2. Օրենքի դրույթների համաձայն Հայաստանում, իրականում, գնահատում ու փորձաքննություն չի իրականացվում: Քանի որ, ՇՄԱԳ-ը ներկայացնում է ձեռնարկողը, փորձաքննություն իրականացնող մարմինը նույնիսկ չի ստուգում ինչքանով է արժանահավատ և հիմնավոր ներկայացված փաստաթղթերը: Վերջինս ուղարկում է ներկայացված փաստաթղթերը համապատասխան կառույցներ և նրանց կարծիքի հիման վրա՝ արտատպելով ՇՄԱԳ-ի դրույթները տալիս է փորձագիտական եզրակացություն: Այսինքն, փորձաքննություն իրականացնող մարմինը իրականացնում է զուտ տեխնիկական՝ փաստաթղթեր

և կարծիքներ հավաքելու գործառույթ: Փորձագիտական եզրակացությունների մեջ հանձնարարականներն էլ կրում են ձևական բնույթ, որպես կանոն նշված որ ձեռնարկողը պետք է գործի ՀՀ օրենսդրության համապատասխան, ինչը ինքնին հասկանալի է և պարտադիր: Եզրակացություն տալիս, հաշվի չեն առնվում ձեռնարկողի կողմից նախկինում թույլ տրված խախտումները և դրանց նկատմամբ կիրառված պատասխանատվության ենթարկելու հանգամանքը: Օրինակ, Ախթալայի նկատմամբ բազմիցս կիրառվել են պատժամիջոցներ /տուգանքներ/ ՀՀ օրենսդրության խախտման համար, սակայն ՀՀ բնապահպանության նախարարությունը հերթական անգամ տվել է դրական փորձագիտական եզրակացություն: Հաշվի չեն առնվում նաև ձեռնարկողի ֆինանսական վիճակը, ինչը նաև օրենսդրության բացն է, քանի որ Օրենքի համաձայն չի պահանջվում փաստաթուղթ ձեռնարկողի ֆինանսական վիճակի մասին: Արդյունքում ստացվում է այնպես, որ սնանկության գործընթացում և միլիոնավոր դրամների պարտքեր ունեցող, դրամական միջոցներ չունեցող կազմակերպությունը ստանում է հերթական դրական եզրակացությունը: Այդպիսի երկու՝ ոսկի արդյունահանող ընկերություններ՝ «Մեգո Գոլդ» ՍՊԸ և «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ, որը ընդհանրապես չունի գույք և ֆինանսական միջոցներ և ունի հսկայական պարտք, այս տարի ստացել են հերթական դրական եզրակացությունը:

3. Փորձաքննություն իրականացնող մարմինը ընդհանրապես անտեսում է ՀՀ օրենսդրությունը և միջազգային նորմերը: Նույնիսկ այն դեպքում, երբ ՇՄԱԳ-ում ձեռնարկողը նշում է շրջակա միջավայրի և սոցիալական վիճակի վրա բացասական ազդեցությունը, փորձաքննություն իրացնող մարմինը անտեսում է այն և տալիս է դրական եզրակացություն: Այսպես, Գեորգիմ ՍՊԸ՝ Ամուլսարի ոսկու հանքի 2016թ. ՇՄԱԳ-ում և Բնապահպանական ու սոցիալական հաշվետվության մեջ հստակ նշել է, որ նախկինում գյուղատնտեսական նշանակության հողերի հազարավոր հեկտարներ վերականգնման և հետագա օգտագործման համար պիտանի չեն լինելու, արոտները և ստորգետնյա ջրերը աղտոտվելու են, որ կլինի զարշահոտ, փոշի, ցնցումներ, ջրի աղբյուրների կորուստ, բռնությունների և սեռավարակների աճ և այլն, այն էլ Ջերմուկ առողջարանում, որը համարվում է առողջարանային և տուրիզմի կենտրոն, հազվագյուտ հանքային ջրերի աղբյուրներով և որտեղ նախատեսվում է ստեղծել ազգային պարկ: Այս պարագայում

Բնապահպանության նախարարությունը տալիս է դրական եզրակացություն:

4. Որպես կանոն, ներկայացվում են առանձին հայտ էր հանքավայրի և գործարանի ամ պոչամբարի կառուցման համար, կամ գործունեությունը դեռ չսկսած կամ ընթացքում դիմում են ծավալների մեծացման հայտով: Այս դեպքերում հնարավոր չէ գնահատել շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը, ինչը նախատեսված Օրենքի 17-րդ հոդ. 2-րդ մասի 6-չդ կետում: Ընդհանրապես, փորձաքննություն իրականացնող մարմինը շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը չի գնահատում, այդ իսկ պատճառով մի գետի, օրինակ Եղեգիսի վրա տրվում է 14 փոքր ՀԷԿ-երի շահագործման դրական եզրակացություններ և ամբողջ գետը հայտնվում է խողովակի մեջ: Կամ, օրինակ, Զանգեզուր կենսոլորտային համալիրում տրվում է բազմաթիվ հանքերի շահագործման դրական եզրակացություններ, առանց հաշվի առնելու շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը, այն էլ հատուկ պահպանվող տարածքի վրա:
Ընդհանուր առմամբ Օրենքի 17-րդ հոդ. պահանջները չեն կատարվում փորձաքննություն իրականացնող մարմնի կողմից:

Իրավաբան Նազելի Վարդանյան